# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/L-29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 8 | ճտքավոր կոշիկներ | ճտքավոր կոշիկներ | ճտքավոր կոշիկներ | Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ | Խոշոր եղջերավոր անասունի հարթ (առանց նակատի), սև գույնի, կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի): Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճիտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից և տակացուից: Կոշկերեսի և հետնամասի կաշին առնվազն 1.5+/-0.2մմ հաստության, լեզվակից ճտքերին միացող հատվածը 1.5+/-0.2մմ հաստության, իսկ ճտքերը ծալվածքով 1.5+/-0.2մմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստության կաշվից, քթամասը և կրունկամասը կոշտ: Քթամասում և կրունկամասում ներսից միջադրվում են թերմոպլաստ, որն ապահովում է մինչև 50 Ջոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կապակցված, առնվազն 2.8 մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8 մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կոշիկի երեսամասի ներսի հատվածը մշակվում է 240-245 գրամ մակերեսային խտությամբ 100 % բամբակ բաղադրությամբ կտորից: Լեզվակը` փակ փականով: Կոշիկի ճտքերի բարձրությունը` 23+/-1 սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Տակացուն` միաշերտ, մաշվածադիմացկուն, յուղակայուն ռետինից` խիստ արտահայտված պահպանաշերտով: Կոշիկը ոտքին հարմարեցվում է ճտքերի վրա ամրացված մետաղյա փոլակներով անցնող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կոշկաքուղերով և ներսամասին մշակված երկկողմանի շղթայով: Շղթան ողջ երկայնքով երկկողմանի մշակված է պաշտպանիչ փականներով: Կոշկաքուղերը` քիմիական մանրաթելից: Կոշիկի միջադիրը` ստելկան, առնվազն 3 մմ հաստության բնական նյութից` պադոշից: Կոշիկը տակամասում ունի դրոշմ` վրան նշված չափսը: Կոշիկի չափսերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը` ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են` տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Պատվիրատուի պահանջով Մատակարար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել։ Ճտքավոր կոշիկի նմուշը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2024/L-29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 8 | - | - | - | - | - |